ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 մարտի 2016 թվականի N 188 - Ն

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել թույլտվություն չպահանջող օդային հաղորդակցությունների որոշ տեսակների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. մարտի 4
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
մարտի 3-ի N 188 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇ ՏԵՍԱԿՆԵՐԻ

1. Փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական, որոնողափրկարարական և հրդեհաշիջման աշխատանքների իրականացման նպատակներով օդային հաղորդակցություն.

2. Բնակչության տարահանման նպատակով օդային հաղորդակցություն.

3. Ոստիկանության գործառույթներով պայմանավորված օդային հաղորդակցություն.

4. Պետական մարմիններում կամ պետական կառավարչական հիմնարկներում շահագործվող օդանավերով շտապ և անհետաձգելի բժշկական օգնության համար պացիենտի տեղափոխման, շտապ և անհետաձգելի բժշկական օգնության համար բժիշկների տեղափոխման նպատակով օդային հաղորդակցություն.

5. Պետական մարմիններում կամ պետական կառավարչական հիմնարկներում շահագործվող օդանավերով, կենսաբանական, քիմիական, ճառագայթային գործոնով պայմանավորված՝ արտակարգ իրավիճակների ժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 777-Ն որոշման պահանջներին համապատասխան, կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումներ իրականացնելու համար անձանց տեղափոխման նպատակով օդային հաղորդակցություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ